ԳՐԱԲԱՐԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Գ. Բ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Բայի ժամանակային ձևերը գրաբարում ըստ կազմության բաժանվում են երկու տեսակի՝ պարզ կամ համադրական և բաղադրյալ կամ վերլուծական։ Պարզ են այն ժամանակային ձևերը, որոնցում խոնարհումը կատարվում է բայի վերջավորությունների փոփոխությամբ, ինչպես, օրինակ, գրեմ, գրէի, գրիգեմ, գրեցիս, գրեա՛, գրեսջիր *և այլն։*

Իսկ բայի այն ժամանակային ձևերը, որոնք կազմվում են որևէ դերբայով և օժանդակ կամ այլ բայով, կոչվում են բաղադրյալ կամ վերլուծական ժամանակներ։ Գրաբարում վերլուծական ժամանակաձևերը կազմվում են անցյալ ու ապառնի (–ոց մասնիկով տարբերակը) դերբայներով և օժանդակ բայով։ Վերլուծական ժամանակների կազմում որպես օժանդակ բայ մեր քերականների ու լեզվաբանների կողմից դիտվել են եմ, լինիմ, ունիմ, կամ[1]*, երբեմն էլ՝* գոմ *բայերը։ Բայց մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ, բացի թվարկված բայերից, օժանդակ բայի դերում հանդես են գալիս նաև* գտանեմ, երեիմ, ասեմ, թուեմ, համարիմ, կարծեմ, պահեմ *բայերը։*

Անցյալ դերբայն օժանդակ բայի հետ միասին գրաբարում կազմում է երեք վերլուծական ժամանակ, քանի որ օժանդակ բայը գրաբարում ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի։ Անցյալ դերբայի հետ եմ օժանդակ բայը կազմում է վաղակատար-հարակատար ներկա (հարակատար), վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար) և ստորադասական եղանակի վերլուծական ապառնի ժամանակները։

Վաղակատար-հարակատար ներկա (հարակատար) *ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի ներկայով։ Գրաբարյան այդ ժամանակային ձևը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի սահմանական եղանակի վաղակատար և հարակատար ներկաներին։ Նշված ժամանակաձևի համար բերենք բնագրային օրինակներ*[3]*. «Ի նոցանէ իսկ ելեալ է բանն՝ և ոչ ի մէնջ» (Եզն., էջ 86)*[4]*։ Հենց նրանցից է ելել այն խոսքը և ոչ թե մեզնից։ «Եւ ոչ չար և չարշարիչ* արարեալ *է զնա Աստուծոյ» (Ն. տ., էջ 185)։ Եվ ոչ էլ չար և չարչարիչ է* ստեղծել *նրան Աստված։ Այս նախադասությունների մեջ, ինչպես երևում է նաև թարգմանությունից, հիշյալ վերլուծական ժամանակային ձևը արտահայտում է սահմանական եղանակի վաղակատար ներկայի իմաստ։ Ըստ որում, առաջին նախադասությունում բայի սեռը չեզոք է, իսկ երկրորդում՝ ներգործական։*

Գրաբարում ներգործական սեռի բայերը նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ, ինչպես, օրինակ, «Մատանայ, ասէ,

---

[1] *Տե՛ս* Վ. Չալրիեան. *Քերականութիւն հայկազեան լեզուի, աշխատասիրութեամբ* Ա. *Այտընեան. Վիեննա, 1885, էջ 365—369։* Ա. Աբրահամյան. *Գրաբարի ձեռնարկ. Երևան, 1976, էջ 211, 223։ Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, Երևան, 1975, էջ 220—221, 232 և այլն։*

[2] *Տե՛ս* Ա. Բագրատունի. *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց. Վենետիկ, 1852, էջ 200։* Ա. Այտընեան. *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 96։*

[3] *Մենք աշխատել ենք ավելի շատ ծանրանալ իմաստային նրբերանգների վրա։ Իսկ իմաստային նրբերանգները ավելի ցայտուն դարձնելու նպատակով երբեմն տվել ենք գրաբար տեքստերի աշխարհաբար թարգմանությունը։*

[4] Եզնիկ Կողբացի. *Եղծ աղանդոց. Վենետիկ, 1826։*

ոստանայ հանէ, ապա ուրեմն բաժանեալ է յանձնէ իւրմէ» (Եղն., էջ 85)։ Իրենից է բաժանվել։ «Ուստի յայտ է՝ թէ բեռեալ են, և ոչ գնայունք» (Ն. տ., էջ 188)։ Ուստի հայտնի է, թե բեռված են և ոչ գնայուն։ «Որ առանձինն նրստի և զուարթ կայ, զերեալ է ի սատանայէ» (Ն. տ., էջ 301)։ Ով առանձին է նստում և ուրախանում, նա զերված է սատանայի կողմից։

Գրաբարում անցյալ դերբայը վաղակատար-հարակատար ներկա (հարակատար) ժամանակ է կազմում նաև լինել բայով, որը աչքի է ընկնում իր գործածության բարձր հաճախականությամբ։ Ըստ որում լինել բայը վերլուծական ժամանակի կազմում կարող է հանդես գալ խոնարհման ամբողջ հարացույցով։ Օրինակներ. «Յորժամ տկար եմ վասն Քրիստոսի, յայնժամ զօրացեալ լինիմ» (Կոր., էջ 80)[5]։ Երբ տկար եմ Քրիստոսի համար, այն ժամանակ զորացած եմ լինում։ Այս օրինակում բայն ունի չեզոք սեռի իմաստ։ Այժմ բերենք օրինակներ կրավորական սեռի վերաբերյալ։ «Ընտանեբար... ի գաւառականացն պատուեալ լինէր» (Կոր., էջ 64)։ Ընտանեբար մեծարվում էր համերկրացիների կողմից։ «Հրամայեալ լինէր... ի տիեզերական քաղաքին մեծարել» (Ն. տ., էջ 66)։ Հրամայվում էր... մեծարել տիեզերական քաղաքում։ «Եղջիւր եկեղեցւոյ քոյ բարձրացեալ լիցի» (Ագաթ., էջ 81)[6]։ Քո եկեղեցու զորությունը թող բարձրացվի (կամ՝ բարձրացված լինի)։ «Ասէ ցմիւս անդամալոյծն՝ թէ թողեալ լիցին քեզ մեղք քո» (Եղն., էջ 80)։ Ասում է մյուս անդամալույծին՝ թող ներված լինեն քո մեղքերը։

Կամ բայը, որը ևս կազմում է վաղակատար-հարակատար ներկա ժամանակ, կարող է դրվել անցյալ դերբայից հետո կամ առաջ, ինչպես՝ «Օդս՝ որ է ի մէջ գնդին երկնից՝ փակեալ կայ» (Եղն., էջ 192)։ «Երկիր... ի վերայ ոչինչի կայ հաստատեալ» (Ն. տ., էջ 17)։ «Այր դու, զի՞ կաս զարմացեալ, և ո՞չ ի միտ առնուս զմեծամեծս Աստուծոյ» (Ագաթ., էջ 386)։

Անցյալ դերբայը հարակատար վերլուծական ժամանակ է կազմում նաև ունիմ բայով, ինչպես՝ «Ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զքաջութիւնս» (Կոր., էջ 26)։

Հանդիպում ենք նաև օրինակների, որոնցում ունել բայը գործածվում է անորոշ դերբայի գործիական հոլովաձևով, ինչպես՝ «Զմի ոմն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ» (Խոր., էջ 50)[7]։

Շատ հազվադեպ վերլուծական հարակատար ժամանակի կազմում օժանդակ բայի դեր են կատարում նաև երևիմ, ասեմ, թուեմ, զտանեմ, պահեմ, համարիմ, կարծեմ բայերը։ Այժմ բերենք օրինակներ մեր թվարկած բայերի հերթականությամբ։ «Ուստի լեալ իսկ երևի հիւղն, և ոչ անարար» (Եղն., էջ 33)։ «Եկեալ երևի արդ ի վախճան ժամանակացս» (Ագաթ., էջ 210)։ «Առ Յակոբ որդին Իսահակայ... Տէրն ծանուցեալ երևի» (Ն. տ., էջ 157)։

«Եւ ի նմանէ ձգեալ ասի մեծ նախարարութիւն ազգին Խոռխոռունեաց, արք քաջք և անուանիք» (Խոր., էջ 38)։ «Ի բերանոյ Աստուծոյ առեալ ասի պատուէր» (Ն. տ., էջ 14)։ «Որով և անունն Աստուծոյ հայհոյեալ ասի» (Ագաթ., էջ 177)։

«Եւ ինքն վասն ահի սաստից օրինացն ասեառն՝ թշնամի համարեալ թուի որոց հանապազ անցուցանէին զկարգօքն Քրիստոսի» (Բուզ., էջ 28)[8]։

«Մոլացեալ զտանիմք յայսպիսի մեծ հոգողութենէ (Փարպ., էջ 44)[9]։ «Այրընտիր գնդաւ յաղթեալ զտաւ նա» (Ն. տ., էջ 153)։ «Սահման քննութեանցս յանհունսն զանցեալ զտանի» (Զենոն, էջ 97)[10]։

---

5 Կորիւն. Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի. Երևան, 1941։

6 Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909։

7 Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913։

8 Փաւստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883։

9 Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան. Տփղիս, 1904։

10 Զենոն. Յաղագս բնութեան.—Մաշտոցի անվ. Մատենադարանի «Դիտական աշխատությունների ժողովածու», 1950, № 2։

«Խաւարն արտաքին նոցա թանձրացեալ պահի» (Եղ., էջ 55), այսինքն՝ թանձրացած է պահվում։ «Այնպիսոյն յաստուածոցն մթերեալ պահիցն» (Փարպ., էջ 42), այսինքն՝ մթերված են պահվում։ «Ըստ որոյ արժանի պատրաստեալ պահիւն դմա չարաչար հատուցմունք և մահք» (Ն. տ., էջ 81), այսինքն՝ պատրաստված են պահվում։

Նման կառույցներում դերբայն արտահայտում է վիճակ, դրություն։ Բերենք մեկ օրինակ ևս. «Այլուստ բերէին համբաւս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին» (Բուզ., էջ 144), այսինքն՝ բերդը պաշարված (կամ՝ պաշարված վիճակում) էին պահում։

Համարել և կարծել բայերը օժանդակ բայի դերում հանդես են գալիս շատ հազվադեպ. դրանք ևս արտահայտում են իմաստային նրբերանգներ, ինչպես՝ «Առ սէրն յեղեալ զեղեալ յիմարեալ ապշեալ... համարեցայ՝ եթէ կենդանի իցէ» (Ագաթ., էջ 110)։

«Մի՛... ի պատանացն արհամարհեալ հովուացն կարծիցի» (Ագաթ., էջ 196), այսինքն՝ արհամարհված չկարծվի կամ չարհամարհվի։

Վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար) ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և օժանդակ բայի անցյալով։ Այդ ժամանակը իմաստով համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի վաղակատար և հարակատար անցյալ ժամանակներին։ Ըստ որում ներգործական սեռի բայերը կարող են արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ։ Այդ յուրահատկությունները ցույց տանք գրաբար մատենագրությունից քաղած օրինակներով։ Այսպես՝ «Աստուծոյ զմարդն արարեալ էր» (Եղն., էջ 35)։ Աստված էր մարդուն ստեղծել։ «Զի գրեալ էր յոդէնսն՝ թէ» (Ն. տ., էջ 268)։ Քանի որ օրենքում գրված էր, թե։ «Մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա» (Ագաթ., էջ 18)։ Մեծ ուժով դիմել, եկել, հասել էին նրա վրա։

«Քաւդեայքն պնդեալ էին՝ թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ (Եղն., էջ 156) նախադասության մեջ վաղակատար-հարակատար անցյալն ունի անկատար անցյալի իմաստ. քավդյաները պնդում էին, թե մեռնում է թագավորը, բայց նա չմեռավ։

Վաղակատար-հարակատար անցյալ ժամանակ է կազմվում նաև կամ, ունիմ, թուեմ, երևիմ, համարիմ բայերով, որոնք սովորաբար դրվում են դերբայից հետո, բայց երբեմն հանդիպում ենք նաև նախադաս դրությունների։ Օրինակներ. «Նա լռեալ կայր և ոչ ինչ մեղանչէր նմա» (Եղն., էջ 267)։ «Թզենին բարձեալ ունէր զօրինակ անպտուղ մարդկան» (Ագաթ., էջ 338)։ «Որոյ գագաթնն սաստկութեամբ սառնամանեաց թուէր պատեալ» (Խոր., էջ 75)։ «Ամպովն պատեալ երևէր» (Ագաթ., էջ 277)[11]։ «Յաչս ձեր մեռեալ համարեալ էի» (Ն. տ., էջ 129)։ Ձեր աչքում մեռած էի համարված։

Ստորադասական եղանակի վերլուծական ապառնի ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և օժանդակ բայի առաջին ապառնիով։ Այդ ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների երկրորդական վերլուծական ապառնիներին՝ կազմված հարակատար դերբայով ու լինել բայով։ Օրինակներ. «Որ օրինօքն ամուսնացեալ իցէ» (Եղն., էջ 20)։ Որը օրենքով ամուսնացած լինի։ «Ամենայն ինչ... հարկ է զի ընդ նովին արարեալ իցէ» (Ն. տ., էջ 194)։ Ամեն ինչ... հարկ է, որ նրա կողմից ստեղծված լինի։

Անցյալ դերբայով ձևավորված հարակատար, գերակատար և ստորադասական եղանակի վերլուծական ապառնի ժամանակները կազմվում են նաև անձնական դերանունների միջոցով. այդ դեպքում անցյալ դերբայով արտահայտված ժամանակաձևի երրորդ դեմքին հարադրվում է անձնական դերանվան սեռական հոլովը։ Այդ կառույցում գործողություն կատարողի դեմքն ու դեմքի թիվն արտահայտվում են դերանվան միջոցով։ Օրինակներ. «Լռեալ ես է իմ, թէ» (Բուզ., էջ 163)։ «Իմ... աղ և հաց կերեալ է յաշխարհին

[11] Երբեմն հանդիպում ենք երևիմ բայի -իր կրավորական վերջավորությամբ կիրառությանը, ինչպես՝ «Որպէս նշմարեալ երևիր իբրև գրով երանելի խուժիկն» (Փարպ., էջ 103)։

ձերում» (Եղ., էջ 170)[12]։ «Մեր ոչ միայն զի անցուցեալ չէ և վնասեալ զկրակն, այլ և մեծարեալ է զնա և բարի արարեալ» (Փարպ., էջ 81)։ «Քո իսկ ծնեալ է զմեզ» (Ագաթ., էջ 297)։ «Քո իսկ է ծնեալ զմեզ» (Ն. տ., էջ 172)։ «Զոր քո հուսեալ է ընդ մեզ և երդուեալ» (Փարպ., էջ 133)։ «Զոր ինչ խորհեալ է ձեր և իմացեալ» (Ն. տ., էջ 174)։ «Իսկ լուեա՞լ է ձեր՝ եթէ ո՛յր ուսուցեալ է ձեզ զայդպիսի մոլորութիւն» (Եղ., էջ 176)։ «Զոր նոցա արարեալ է և ձեր զօրագլխաց տեսեալ» (Փարպ., էջ 173)։ «Եւ իմ... էր յառաջագոյն հոգացեալ զայսպիսի մեծ իրս և զմտաւ ածեալ ցուցանել ձեզ» (Ն. տ., էջ 43)։ Խորհեալ էր մեր և խօսեալ» (Ն. տ., էջ 81)։ «Զոր... քո և նորա խօսեցեալ էր ընդ միմեանս» (Ն. տ., էջ 172)։ «Նորա աւերեալ էր ատրուշան մի» (Եղ., էջ 129)։ «Ձեր արարեալ և կատարեալ իցէ յամենայն ըստ կամաց իմոց» (Ն. տ., էջ 51)։

Ինչպես երևաց վերոբերյալ մի քանի օրինակներից էլ, երբեմն նույն ենթական վերագրվում է բազմակի բոլոր ստորոգյալներին, ինչպես՝ «Մեր ոչ միայն զի անցուցեալ չէ և վնասեալ զկրակն, այլ և մեծարեալ է զնա և բարի արարեալ» (Փարպ., էջ 78)։

Ջնայած անցյալ դերբայի մոտ օժանդակ բայը հաճախ զեղչվում է, բայց դերբայն ունենում է դիմավոր բայի նշանակություն։ Նման նախադասություններում ենթական մեծ մասամբ դրվում է սեռական հոլովով, ինչպես՝ «Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ» (Բուզ., էջ 143)։ Այդպիսի կիրառության ավելի շատ հանդիպում ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում, ինչպես՝ «Առեալ երանելոյն Մաշտոցի զաս մի մանկտոյ» (Կոր., էջ 46)։ «Երանելոյն Սահակայ լցեալ աւուրքք երկայն ժամանակաւք» (Ն. տ., էջ 86)։ «Թարգմանչացն հասեալ՝ ուր առաքեցանն» (Ն. տ., էջ 74)։ «Նորա... քնեալ զբարբարոս զբանս աղուաներէն լեզուին» (Ն. տ., էջ 68)։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման կառույցներում երբեմն հանդես է գալիս նաև իր, որ, սա դերանունների սեռական հոլովը, ինչպես՝ «Զոր իր չէր արարեալ» (Եղն., էջ 265)։ «Իբրև թէ իր չիցէ գործեալ զայն» (Բուզ., էջ 184)։ «Որոյ այնչափ վնաս յառաջագոյն քան զմահն իր արարեալ էր ի տան նորա» (Եղն., էջ 268)։ «Քանդեալ էր և սոցա զատրուշանն յԱրտաշատ և յառաջագոյն ըմբռնեալ էին ի կապանս յուրացիալն Վասակայ» (Եղ., էջ 129)։

Դերանվան սեռական ենթակայով կազմված կառույցներից յուրաքանչյուրը առանձին նախադասության արժեք ունի։ Օրինակ՝ լուեալ է իմ նշանակում է «իմ լսածը կա՝ գոյություն ունի», որը ժամանակակից ըմբռնմամբ նշանակում է «ես լսել եմ» կամ «ես լսեցի»[13]։

Գրաբարում հանդիպում ենք նման կազմություն ունեցող դիմավոր այնպիսի ձևերի, որոնցում օժանդակ բայի դերը կատարում է լինել բայը, ինչպես՝ «Ենորհեալ լինէր քո մեզ զկեանս անցուս» (Ագաթ., էջ 43)։ «Զդոյն սիտի ծննդեան՝ ի հատուցմանէ անտի յանդիմանութեանն զտեալ լինէր՝ նոցա» (Ն. տ., էջ 317)։ «Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձակեալ լիցի զքեզ» (Բուզ., էջ 203)։

Անցյալ դերբայով ձևավորված վաղակատար-հարակատար ներկա (հարակատար), վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար) և ստորադասական եղանակի ապառնի վերլուծական ժամանակները դրսևորում են հետևյալ առանձնահատկությունները.

1. Անցյալ դերբայի մոտ ենթական մեծ մասամբ դրվում է սեռական հոլովով, ինչպես՝ «Աստուծոյ զնա չար արարեալ էր» (Եղն., էջ 149)։ Աստված նրան չար էր ստեղծել։

2. Անցյալ դերբայի մոտ օժանդակ բայը հաճախ զեղչվում է, բայց դերբայն ունենում է դիմավոր բայի նշանակություն, իսկ դերբայի մոտ ենթական դրվում է սեռական հոլովով, ինչպես՝ «Որում հասեալ ժամանեալ հայրարա-

---

[12] Ս ղ ի շ է. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Երևան, 1957։

[13] Տե՛ս Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 217։

ռուին Գտայ» (Կոր., էջ 60)։ «Որոց մեր իսկ ականատես եղեալ կերպարանացն» (Ն. տ., էջ 96), այսինքն՝ հասավ, ժամանեց Գիտը։ Մենք ականատես եղանք։

3. Օժանդակ բայի դեր խաղացող բառը սովորաբար դրվում է անցյալ դերբայից հետո, բայց հանդիպում ենք նաև շրջուն շարադասության դեպքերի, ինչպես՝ «Եւթանասուն ամ է կարգեալ զկենաց քոց» (Եզն., էջ 306)։ «Եղիցի անդ աղբիւր բղխեալ ի տան Դաւթի» (Կոր., էջ 58)։ «Եւ ոչ զոք ի թագաւորազգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւոեանս կենդանի» (Եզն., էջ 104)։ «Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ... սակայն բազում գործք արիութեան գտանին գործեալ ի մերում աշխարհիս» (Խոր., էջ 10)։ «Իմացեալ Նապհոյ, թէ թերուղիղ է Արկաղ՝ խօսի ընդ նմա խաղաղութիւն քանզի էր պարտեալ հարեալ ի հօրէ նորա» (Ն. տ., էջ 310)։ «Մինչդեռ կայր նա կախեալ՝ սկսաւ խօսել» (Ագաթ., էջ 42)։ «Ի խելացնոր կարծեաց յերազոց իցեն հաստեալք և եղեալք» (Ն. տ., էջ 37)։

4. Ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայը կամ ժխտական մասնիկը սովորաբար անցնում է դերբայից առաջ, և հաճախ օժանդակ բայի և դերբայի միջև ընկնում են նախադասության այլ անդամներ։ Օրինակներ. «Մովսէսի չէ ասացեալ» (Եզն., էջ 193)։ «Ի բարերար արարչէն չար ինչ չի՞ լեալ» (Ն. տ., էջ 10)։ «Զէր աստուածաքարոզս աստուածպաշտութեանն յամենայն դարս առաքեալ» (Ն. տ., էջ 231)։ «Ոչ էր քո ստեալ ի բանիցն զոր խօսեցեալ էր՝ և ոչ բան մի» (Փարպ., էջ 172)։ «Զիցէ՞ արդեօք հատեալ յոյս կենաց» (Ագաթ., էջ 126)։

5. Երբեմն սովորական շարադասության ժամանակ էլ դերբայի և օժանդակ բայի միջև ընկնում են նախադասության այլ անդամներ, ինչպես՝ «Զի լամբասեալ ի չարութիւն է սատանայ, այն ամենեցուն յայտնի է» (Եզն., էջ 109)։

6. Տարբեր խոսքի մասերով արտահայտված բազմակի ստորոգյալների դեպքում օժանդակ բայը դերբայի մոտ զեղչվում է։ Օրինակ՝ «Հիւանդ ես կամ աշխատեալ» (Եզն., էջ 308), այսինքն՝ աշխատեալ ես։ «Որք ի նմա են և զատուցեալք ի նմանէ» (Ն. տ., էջ 25), այսինքն՝ զատուցեալք են։

7. Բարդ նախադասության կազմում, երբ ստորոգյալները տարբեր են լինում, օժանդակ բայի դեր խաղացող բայը չի զեղչվում, ինչպես՝ «Եւ որք մնացեալք էին՝ վատնեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն (Եզ., էջ 118)։

8. Երբ բազմակի ստորոգյալների օժանդակ բայը նույնն է, այն երկրորդ դերբայի մոտ զեղչվում է, ինչպես՝ «Զնորա ինչ հանեալ էր, և մարդոյն շնորհեալ» (Եզն., էջ 45), այսինքն՝ շնորհեալ էր։ «Զոր գրեալ էր և տուեալ բերել առ մեզ» (Փարպ., էջ 45), այսինքն՝ տուեալ էր։

9. Կախված տրամաբանական շեշտից՝ երբեմն զեղչվում է բազմակի ստորոգյալներից ոչ թե երկրորդի, այլ առաջինի օժանդակ բայը։ Այդ երևույթին առանձնապես հանդիպում ենք այնպիսի նախադասություններում, որոնցում անցյալ դերբայները անմիջապես հաջորդում են միմյանց։ Իսկ այդ դեպքում օժանդակ բայը նույնպես վերագրվում է երկու դերբայներին էլ։ Այսպես՝ «Այլ նոքա, ասէ, չլինէին ունկնդիր, զի հաւանեալք և միամտեալք էին ընդ սէրութիւնն Արտաշրի քան զտէրութիւն ազգատոհմին իւրեանց և եղբայրութեանն» (Խոր., էջ 202)։ «Որք սուզեալք լողեալք էին յանյայտ տեղիս» (Ն. տ., էջ 322)։ «Պահիցէ զբանս նորս՝ իբրև զմարգարիտ պատուական գտեալ խնդութեամբ, գնեալ և զգուշացեալ լինի նմա» (Ագաթ., էջ 89)։ «Բաժանեալ դիզեալ կային անբաւութիւնք» (Ն. տ., էջ 383)։

10. Նման կառուցներում, երբ հատկապես ընդգծվում է գործողությունը, օժանդակ բայը չի զեղչվում, օրինակ՝ «Զպարարակ իմ գենեալ է, և զճաշ իմ պատրաստեալ է» (Ագաթ., էջ 48)։ «Զորս առաքեալ էր նենգաւոր իշխանին Սիւնեաց Վասակայ ի դայեկաց... և տարեալ էր ի դուռն» (Փարպ., էջ 197)։

11. Հոգնակի կամ բազմակի ենթակաների մոտ դերբայը կարող է դրվել նաև հոգնակի թվով, ինչպես՝ «Այլ երկինք և երկիր անօթք ետեղակալք են հաստատեալք յարարչէն» (Եղն., էջ 159)։ «Ուստի յայտ է՝ թէ աստեղքն բեռեալք են և ոչ գնայունք» (Ն. տ., էջ 188)։ «Գտաք մեք անկեալք ընդ անողորմ դատաստանօք ըստ մեղացն յանցաւորութեան» (Եղ., էջ 106)[14]։

12. Բարդ ստորադասական նախադասության երկրորդական նախադասության կազմում գտնվող անցյալ դերբայը երբեմն ընդունում է հոդ։ Օրինակներ. «Մարդն... չէր հմուտ այլ իմիք, բայց այնմ ևեթ՝ յոր պատշաճեալն էր» (Եղն., էջ 41)։ «Առաջի եդեալ վասն որոյ եկեալն էր» (Կոր., էջ 70)։ «Զոր առաջի արկեալն էր՝ ինքեանք քակտէին» (Ագաթ., էջ 293)։ «Ոչ ևս զգային միմեանց յղութիւնն որով և ծանրացեալն էին» (Ն. տ., էջ 318)։ «Եւ գրեսցուք՝ եթէ բժշկեալքն էին ինչ նմա անկ վասն երախտեացն» (Եղն., էջ 267)։ «Արդ և զսատիրկեա ի թերահաւատութենէս՝ յոր ըմբռնեալս է» (Բուզ., էջ 189)։

Վերլուծական ժամանակների կազմության մեջ հանդես է գալիս նաև -ոց մասնիկով ապառնի դերբայը, որը կազմում է սահմանական եղանակի ապառնի, անցյալ ապառնի և ստորադասական եղանակի վերլուծական ապառնի ժամանակները, որոնցում դերբայն ունի նույն ընդհանուր ձևը բոլոր սեռերի համար։

Սահմանական եղանակի վերլուծական ապառնին կազմվում է ապառնի դերբայով և եմ օժանդակ բայի ներկայով։ Այդ ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի սահմանական եղանակի կատարելի ներկային, այն է՝ սիրելոց եմ նշանակում է «սիրելու եմ» կամ «սիրվելու եմ»։ Բերենք բնագրային մի քանի օրինակներ։ «Զորրորդ խոստովանութիւն զոր առնելոց եմ կարգել զդպրութիւն» (Բուզ., էջ 51)։ «Գնալոց եմք ի բնիկ աշխարհն մեր և յընտանիս» (Ն. տ., էջ 80)։ «Քաղցրութեամբ լո՛ւր զոր ասելոց եմք» (Եղ., էջ 45)։ «Ճանաչեմ զամենայն պատասխանիս, զոր առնելոց ես դու» (Փարպ., էջ 165)։ «Թէպէտ լուեալ էր ի մարգարէիցն՝ թէ գալոց է որդին Աստուծոյ, այլ զժամանակ գալստեանն ոչ գիտէր» (Եղն., էջ 78)։ «Ո՞չ ամենեքեան հոգիք հարկաւորք են առաքելացուք ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որք ժառանգելոց են զփրկութիւն» (Ն. տ., էջ 108)։

Մխիթար Այրիվանեցու երկում մեկ անգամ գործածված է անցանելոյ ձևը, որը ցույց է տալիս ոյ—ու անցումը, այսինքն՝ անցանելոյ—անցանելու—անցնելու։ Այն գործածված է հետևյալ նախադասության մեջ. «Երկու անգամ անցանելոյ է աշխարհ վասն մեղաց՝ ջրով և հրով» (էջ 26)[15]։

Սահմանական եղանակի անցյալ ապառնին կազմվում է -ոց մասնիկով, ապառնի դերբայով և օժանդակ բայի անցյալով։ Այդ ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի սահմանական եղանակի կատարելի անցյալին, օրինակ՝ սիրելոց էր նշանակում է «սիրելու էր» կամ «սիրվելու էր»։ «Որ ի հողոյ եղեւ, և ի հող դառնալոց էր» (Եղն., էջ 68)։ «Գիտէ՞ր Աստուած եթէ այնպէս լինելոց էր» (Ն. տ., էջ 54)։ «Զամենայն ազգս վերացուցանելոց էր յԱստուածութիւնն» (Ագաթ., էջ 312)։ «Յառաջեցաւ լինել կարապետ այնոցիկ՝ որ անդրէն ի նոյն տեղի դառնալոց էին յուրախութիւն» (Եղ., էջ 154)։ «Այլ թէ և բազում աւուրս արարեալ ի Կեսարիայ՝ ոչ ինչ, զորոց զմտաւն ածէր՝ առնելոց էին» (Խոր., էջ 221)։ «Զանուն յաղթութեանն և զօգուտ աւարիս նոքա առնելոց էին» (Փարպ., էջ 133)։

Ստորադասական եղանակի վերլուծական ապառնին կազմվում է նույն ապառնի դերբայով և օժանդակ բայի առաջին ապառնիով։ Այդ ժամանակը հիմնականում[16] համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի կա-

---

[14] Տե՛ս նաև 6-րդ կետի 2-րդ և 7-րդ կետի օրինակները։

[15] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց. Մոսկվա, 1860։

[16] Ասում ենք «հիմնականում», որովհետև ինչպես այդ, այնպես էլ մյուս ժամանակները կարող են ունենալ նաև երկրորդական կիրառություններ։

տարելի դերբայով ձևավորված ըղձական, պայմանական և հարկադրական երկրորդական վերլուծական ապառնիներին։ Լիստ որում ներգործական սեռի բայերը կարող են ունենալ նաև կրավորական սեռի իմաստ, իսկ չեզոք սեռի բայերը՝ միայն չեզոք։ Մատենագիրների երկերում այդ ժամանակին շատ հազվադեպ ենք հանդիպում. այսպես, օրինակ, Կորյունի, Եղնիկի, Ագաթանգեղոսի, Փարպեցու երկերում տվյալ ժամանակը գործածված է ընդամենը վեց անգամ, իսկ Բուզանդի, Եղիշեի և Խորենացու երկերում՝ ոչ մի անգամ։ Հետագայում համեմատաբար ավելի շատ (տասը անգամից ավելի) գործածված է Ղեվոնդի երկում։ Բերենք բնագրային մի քանի օրինակներ։ «Եւ ոչ նիւթ ինչ՝ յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ» (Եղն., էջ 6)։ «Բայց թէ զայն ևս իշխիցեն ամպարշտել՝ թէ որ պատճառ արուեստին է, ի միջոյ բառնալոց իցէ» (Ն. տ., էջ 225)։ «Որք նոքօք աշակերտելոց իցեն յաղգս ազգաց» (Կոր., էջ 98)։

–Ոց մասնիկով ապառնի դերբայով կազմված սահմանական եղանակի ապառնի, անցյալ ապառնի և ստորադասական եղանակի վերլուծական ապառնի ժամանակները հանդես են բերում հետևյալ յուրահատկությունները.

ա) Ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայը հաճախ անցնում է դերբայից առաջ, ինչպես՝ «Այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր ոչ ոք է երթալոց ի թիկունս՝ օգնականութեան նորա» (Բուզ., էջ 137)։ «Որք ոչ ևս էին անուանելոց ի մէջ Արեաց և Անարեաց» (Խոր., էջ 287)։ «Եւ եթէ մեռանել ևս հասանէ ի նոցանէ, սակայն և յայնմանէ ոչ են զանգիտելոց» (Եղ., էջ 113)։ «Ի ձերմէ ծառայութենէ չեմք ելանելոց» (Փարպ., էջ 133)։ «Որում ոչ ինչ էր լսելոց» (Ագաթ., էջ 70)։ «Որ ոչն էին լսելոց նորա հրամանացն» (Ն. տ., էջ 259)։ «Ասէքդ՝ չիցեն յառնելոց մարմինքն մահկանացուք» (Եղն., էջ 293)[17]։

բ) Կախված տրամաբանական շեշտից՝ օժանդակ բայը երբեմն դրական խոնարհման ժամանակ էլ ընկնում է դերբայից առաջ, ինչպես՝ «Յուշ լիցի քեզ և բաժակ մահուն, զոր ի միասին եմք բմպելոց» (Ագաթ., էջ 101)։ «Զինչ ի Սոդոմն էր գործելոց» (Կոր., էջ 28)։ «Առ նա էին մատչելոց» (Ագաթ., էջ 208)։ «Ընդ որ էին անցանելոց» (Ն. տ., էջ 418)։

գ) Բազմակի ստորոգյալների դեպքում օժանդակ բայը կարող է զեղչվել առաջին կամ երկրորդ դերբայի մոտ, այսպես՝ «Զոր տալոց և հատուցանելոց ես գանանցական վրէժ տանջանացն յանշէջ հուրն սպառնացեալ գեհենին» (Եղ., էջ 38)։ «Գալոց իջանելոց էր Աստուածորդին» (Ագաթ., էջ 312)։ «Յուցաւ ինձ դոյնն և կերպարան բանակի այնր և զօրու, յոր բանակ նախադնելոց և վերահայելոց էր» (Փարպ., էջ 143)։

Ահա և օրինակներ, որոնցում օժանդակ բայը զեղչվում է երկրորդ դերբայի մոտ. «Նա ելանելոց է և ունելոց զաշխարհս» (Եղն., էջ 105)։ «Յառաջագոյն գիտէր զսատանայէ՝ եթէ թիւրելոց է, և զմարդիկ յանցուցանելոց» (Ն. տ., էջ 54)։ «Որ գալոցն էր և բառնալոց զկարիս» (Ագաթ., էջ 45)։

դ) Նախադաս օժանդակ բայը դրվում է բազմակի դերբայներից միայն առաջինի վրա, ինչպես՝ «Զոր առժամայն էր տեսանելոց և ի սպառ բեկանելոց» (Փարպ., էջ 150)։

ե) Դերբայը հաճախ ընդունում է ս, դ, ն դիմորոշ հոդերը, որոնք համապատասխանաբար փոխարինում են առաջին, երկրորդ և երրորդ դեմքի անձնական դերանուններին։ Օրինակ՝ «Որք մի անգամ կամին սրտի մտօք հասու լինել սմին զոր առնելոցս եմ» (Բուզ., էջ 1)։ «Զարթի՛ր և ողբա՛... որ ինչ թշուառնալոցս եմք» (Խոր., էջ 363)։ «Ուր ժողովելոցդ ես զամենայն արդարս» (Ագաթ., էջ 106)։ «Քանի որ ծնանելոցն է՝ սուրբ է» (Ն. տ., էջ 188)։ «Ալ որ պարծելոցն իցէ՝ յԱստուած պարծեսցի» (Փարպ., էջ 65)։ «Մկրտի, ի հաստատել զմկրտութիւն ամենայնի՝ որ մկրտելոցն իցեն» (Ագաթ., էջ 209)։

զ) Նման կառույցներում, երբ հոդ չի դրվում, գործածվում է համապատասխան դեմքի անձնական դերանունը, ինչպես՝ «Դու միայն կալոց և մնալոց

---

17 Մեկ-մեկ հանդիպում ենք կանոնավոր շարադասության նաև ժխտական խոնարհման ժամանակ, ինչպես՝ «Ոչ ինչ լսելոց էի յինէն» (Փարպ., էջ 23)։

ես յաւիտեան (Ագաթ., էջ 52)։ «ամանաչեմ զամենայն պատասխանիս, զոր տա-նելոց ես դու» (Փարպ., էջ 165)։

Վերոհիշյալ շարադրանքից կարելի է անել հետևյալ ընդհանուր եզրակա-ցությունները։

1. Վերլուծական ժամանակների կազմում որպես օժանդակ բայ, բացի եմ, լինիմ, ունիմ, կամ, գոմ բայերից, գործածվում են նաև գտանեմ, երևիմ, ասեմ, թուեմ, համարիմ, կարծեմ, պահեմ բայերը։ Եթե անցյալ դերբայի հետ վերլուծական ժամանակներ են կազմում օժանդակ բայի դերում հանդես եկող բոլոր բայերը, ապա ապառնի դերբայի հետ վերլուծական ժամանակ է կազ-մում միայն եմ օժանդակ բայը։ Անցյալ դերբայով ձևավորված վերլուծական ժամանակները (բացառությամբ պակասավոր բայերով կազմվածների) կա-րող են ունենալ խոնարհման ամբողջ հարացույցը։

2. Գործածության ավելի բարձր հաճախականություն ունեն անցյալ դեր-բայով կազմված վերլուծական ժամանակները, որոնցից էլ վաղակատար-հա-րակատար ներկան, իսկ ապառնի դերբայով կազմվածները քիչ են գործած-վում, դրանցից համեմատաբար ավելի հաճախ ենք հանդիպում սահմանական եղանակի վերլուծական ապառնուն։

3. Անցյալ դերբայով և լինել բայով կազմված վերլուծական ժամանակնե-րը գործածվում են հատկապես անցյալ անկատար ժամանակում, որը կրավո-րականի համար հատուկ ձև չունի։

4. Կրավորականությունը ներկայի հիմքից կազմվող ձևերում վերլուծա-կան եղանակով են արտահայտում նաև ա և ու խոնարհման բայերը, որոնք նույնպես կրավորականի համար հատուկ ձև չունեն (բացի ա խոնարհման բա-յերի առաջին ապառնուց)։

5. Ստորադասական եղանակն ունի երկու տիպի վերլուծական ապառնի, որոնցից մեկը կազմվում է անցյալ, իսկ մյուսը՝ ապառնի դերբայով։

6. Վերլուծական ժամանակները, առանձնապես անցյալ դերբայով ձևա-վորվածները, ավելի շատ իմաստային նրբություններ են դրսևորում V դարի մատենագիրների երկերի լեզվում։

АНАЛИТИЧЕСКИЕ ГЛАГОЛЬНЫЕ ВРЕМЕНА ГРАБАРА

Г. Б. ТОСУНЯН

Резюме

Аналитические глагольные времена грабара (древнеармянского языка) образуются сочетанием двух причастий—прошедшего времени, будущего (вариант с формой *-ոց*) и вспомогательного глагола. Наши грамматисты и лингвисты указывали, что в качестве вспомогательного глагола употребляются слова *եմ, լինիմ, ունիմ, կամ, գոմ*. В статье устанавливается, что, кроме этих слов, в роли вспомогательного глагола выступают также слова *գտանեմ, երևիմ, ասեմ, համարիմ, թուեմ, կարծեմ, պահեմ*. Каждое причастие составляет три аналитических времени (*բազմեալ եմ..., էի..., իցեմ..., սիրելոց եմ..., էի..., իցեմ...*). На материале древнеармянских литературных памятников показывается, что с помощью аналитических конструкций в грабаре выражаются различные смысловые оттенки. Кроме того, ряд глаголов, которые не имеют специальных окончаний для выражения страдательного залога, формируют этот залог аналитическим способом глагольных времен.